


# Կրթության կառավարում ամբիոնի ուսանողների ուսումնական պրակտիկան Միդլսեքս համալսարանում



ՀՊՄՀ «Կրթության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի, երկրորդ կուրսի ուսանողուհիներ՝ Ռոզա Նալբանդյանն ու Էլվինա Մարգարյանը, TEMPUS-ի MAHATMA ծրագրի շրջանակներում իրենց երկշաբաթյա ուսումնական պրակտիկան անցկացրել են Լոնդոն քաղաքի Միդլսեքս համալսարանում: Ուսանողները պրակտիկայի ընթացքում

ծանոթացել են պրոֆեսորադասախոսական կազմի հետ, տարբեր ֆակուլտետների և վարչությունների աշխատանքներին: Մասնակցել են քննարկումներին, ծանոթացել տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների հետ, ուսումնական ծրագրերին և կառավարման գործընթացին:



Ուսանողները երկօրյա այց են կատարել նաև Բաֆ-Սպա համալսարան և Կրթության Ինստիտուտ:

Բաֆ-Սպա համալսարանում ուսանողուհիները ծանոթացել են համալսարանի գործունեությանը, իսկ Կրթության Ինստիտուտում՝ մասնակցել են ստեղծագործական մտածողության, կամքի և բանականության մասին քննարկումներին:



Ուսանողուհիները պրակտիկայի արդյունքում ստացան նոր գիտելիքներ, բարելավեցին անգլերենի խոսակցական հմտությունները, ծանոթացան Անգլիայի մշակույթին և կրթական համակարգին, ինչպես նաև ուսումնասիրեցին կրթական համակարգի խնդիրների լուծման մի շարք նորորոպական մոտեցումներ: